

ՌԱԿԵՂՈՒՄԵՆԻ ՌԱՏԻՕ ՍԵՎԱՆ-ը
Լիբանանի բոլոր շրջաններում մեջ, հետևեալ ալիքներում վրայ
* Լիբանանի եւ Սուրիոյ ծովեզերեայ շրջաններում, Լեռնալիբանանի, Պեքաայի, Սայտայի եւ Թրիփոլի մեջ՝ 101.5 FM ալիքին վրայ:
* Հիւսիսային Լիբանանի մնացեալ շրջաններում մեջ 101.3 FM ալիքին վրայ:
* Պեյրութի եւ Լեռնալիբանանի մեջ նաեւ՝ 90.8 FM ալիքին վրայ:
Հեռ.՝ 01-567161-2-3 Fax: 01-567168
* Cablevision 11700 GHz digital. * Կայքէջ: www.radiosevan.com

ՄԻՒՆ՝ ՇԼԻԹ ՕՐ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ

Արաբական Լիգայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսա, Շաբաթ օր, պիտի ժամանէ Պեյրութ եւ հանդիպումներու շարք մը պիտի ունենայ Լիբանանի իշխանութիւնները ներկայացնող պատասխանատուներուն հետ: Մուսա՝ ներկայ պիտի գտնուի «Պեյրութ 2009 գիրքերու համաշխարհային մայրաքաղաք» միջազգային ցուցահանդէսի բացման հանդիսութեան: Բացառուած չէ նաեւ, որ Մուսա՝ Պեյրութի մէջ իր կեցութեան ընթացքին, լիբանանցի պատասխանատուներուն հետ քննարկէ Եգիպտոսի ճամբով դէպի Կազա զէնք մաքսանենգելու Հրգապլայի գործողութեան բացայայտումը եւ անոր իրաւական հետեւանքները:

Երէկ առաւօտեան Պեյրութ ժամանեց Սեուտական Արաբիոյ մշակոյթի նախարար Ապտէլ Ազիզ Խոճան: Սեուտցի նախարարը՝ Պեյրութի մէջ իր կեցութեան ընթացքին տեսակցութիւններ պիտի ունենայ հանրապետութեան նախագահին, վարչապետին եւ խորհրդարանի նախագահին, ինչպէս նաեւ այլ անձնավորութիւններու հետ:

Ս.Գ.ՅԵՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԵԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԸՆԿԵՐ ՍԵՊՈՒՀ ԳԱԼՓԱՔԵԱՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՆՊԱՏՈՒՄԸ

Երէկ ուշ երեկոյեան, Մարմինի թեկնածու Ընկեր Սեպուհ Գալփաքեան անմրցակից մնալով, դարձաւ Լիբանանեան Խորհրդարանի անդամ: Նոյն պատճառներով Արթուր Նազարեան կը յայտարարուի լիբանանեան նոր խորհրդարանի անդամ:

Նշենք թէ, ներքին գործոց նախարար Զիատ Պարուտ սկզբունքով այսօր առաւօտեան պիտի կնքէ մամլոյ ասուլիս մը եւ ներկայացնէ ընտրութիւններու մասնակցողներու պաշտօնական քիւր, ինչպէս նաեւ այլ մանրամասնութիւններ:



ՍԱՍՏ ՀԱՐԻՐԻ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ԹՐԻՓՈԼԻ ԸՆՏՐԱՅԱՆԿ

Մուսթաքպալ Հոսանք խորհրդարանական խմբավորումի նախագահ Սաստ Հարիրի երէկ յայտարարեց Միսլէ եւ

Տըլէյէ ընտրաշրջաններուն մէջ Մարտ 14-ի ուժերուն ընտրացանկերը: Հարիրի, ապա անցաւ Թրիփոլի եւ յայտարարեց Թրիփոլի համահոսակա ընտրացանկը: Ընտրական մթնոլորտին մէջ մնալով, լրատուական աղբիւրներ կը հաւաստեն, թէ «ժամաա Իսլամիյէ»-ի հետ բանակցութիւնները փակուողի հասնելուն պատճառաւ, Սաստ Հարիրի որոշած է Պեյրութի Առաջին ընտրաշրջանին մէջ առաջադրել Ղանուա Ճալուլի թեկնածութիւնը: Միւս կողմէ, «ժամաա Իսլամիյէ» կազմակերպութեան քաղաքական դիւանի պատասխանատու շէյխ Ալի Ամար ընտրական գետնի վրայ պաշտօնապէս Մուսթաքպալ հոսանքին իր կազմակերպութեան խզումը յայտարարեց: Ան աւելցուց, թէ «ժամաա Իսլամիյէ» ընտրութիւններուն պիտի մասնակցի իբրեւ անկախ հոսանք մը:

ՀՂԶՊԱԼԱՅԻ ՑԱՆՑԷՆ ԱԲԵԼԻ ՔԱՆ 50 ՉԵՐԲԱԿԱԼԵԱԼՆԵՐ

Եգիպտոսի մէջ բացայայտուած Հրգապլայի ցանցին անդամներուն նախնական հետաքննութիւնները արտօսած ըլլալով, հետաքննիչ ատեսնի դատախազը հարցաքննութեան թղթածրարը փոխանցեց ազգային անվտանգութեան առեւանդին: Նշենք, թէ ձերբակալուելու թիւը բարձրացած է 50-ի: Հարցաքննութիւններու ընթացքին, նաեւ հայց բարձրացած է կարգ մը բացակայ անձերու դէմ, որոնք պիտի դատուին իրենց բացակայութեան: Հարցաքննութիւններուն հետեւանքով, 25 անձերու դէմ յուրած է ամբաստանագիր, ներառեալ ընդլայնակալ ցանցի ղեկավար Սամի Շեհապի դէմ: Յետեւում հարցաքննութիւններուն ընթացքին կատարուած խոստովանութիւններուն, եգիպտական աղբիւրներ կ'ընդգծեն, թէ Իրանի մատը ակընայայտ է երկրին ազգային անվտանգութեան դէմ պատրաստուած այս գործողութեան մէջ: Եգիպտոս, այժմ խիստ ընտրութեան կ'ենթարկէ ժամաա-

նակաւորապէս իր հողերուն վրայ հաստատուած լիբանանցիներուն փաստաթուղթերը:

ԱՊՊԱՍ ՊԻՏԻ ԱՅՑԵԼԷ ՈՒԱՇԻՆԿԹԸՆ

Պաղեստինեան իշխանութիւններու նախագահ Մահմուտ Ապպաս յառաջիկայ Մայիս 28-ին, Ուաշինկթընի մէջ հանդիպում մը պիտի ունենայ Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամայի հետ: Բրիտանական Financial Times օրաթերթը կը գրէ, թէ վերջին ժամանակաշրջանին Ուաշինկթըն մեղմացուցած է Համասի հանդէպ իր կարծի դիրքը: Օրաթերթը նկատել կու տայ, որ նախագահ Օպամա Գոնկրեւեն 800 միլիոն ամերիկեան տոլարի օժանդակութիւն մը ինկրած է Արեւմտեան Ափի եւ Կազայի համար:

Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացը առջեւ մղելու նպատակաւ, յառաջիկայ օրերուն մեկէ աւելի միջնաւորեւելեան երկիրներու ղեկավարներ պիտի այցելեն Ուաշինկթըն, ուր խորհրդակցութիւններ պիտի ունենան նախագահ Պարաք Օպամայի հետ: Յորդանանի Ապտալա Բ. վեհապետը, Ուաշինկթընի մէջ նախագահ Օպամայի հետ ունեցած հանդիպումէն ետք իր լաւատեսութիւնը արտայայտեց Միջին Արեւելքի խաղաղութեան համար ամերիկեան նոր նախաձեռնութեան: Միջինարեւելեան մեկ այլ զարգացումի մէջ, Միացեալ Նահանգներու Գոնկրեւեց 23-ի դէմ 73 ձայներով վերջին դիւանագետ Քրիսթօֆը Հիլը նշանակեց Իրաքի մօտ Միացեալ Նահանգներու դեսպան:

ՄԸՐ ԿԻՐԱԿԻ ՕՐ ՊԻՏԻ ՅԱՅՏԱՐԱՐԵ ՄԵԹՆԻ ՑԱՆԿ

Երեսփոխան Միշէլ Մըր այցելութիւն մը տուաւ խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիին: Հանդիպումէն ետք, Մըր ըսաւ, թէ Պըրրիի հետ քննարկած էր երկրին իրավիճակը, ինչպէս նաեւ ընտրական մթնոլորտը:

Մըր յայտնեց, թէ Մեթնի ընտրաշրջանի իր ցանկը Կիրակի օր պիտի յայտարարէ:

ԻԼԻԱՍ ՄԸՐ ԿԸ ԳԻՐՈՒԱՏԷ ԲԱՆԱԿԻ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պաշտպանութեան նախարար Իլիաս Մըր, իր քննարկանքին մէջ ընդունեց լիբանանեան բանակի ընդհանուր հրամանատար, գորավար ժան Ղահուաճին եւ զինուորական խորհուրդի անդամները: Մըր՝ իր հիւրերուն հետ քննարկեց երկրին ապահովական իրավիճակը: Այս առիթով, ան դրուատեց երկրին անվտանգութիւնը երաշխաւորելու նպատակաւ լիբանանեան բանակին մատուցած ծառայութիւնները:

ՕՂԱՍԱՊԵԱՆ Կ'ԸՍԷ ԹԵ ՎԱՐՉԱԿԱՐԳԸ ՅՈՒՆԻՍ 7-ԷՆ ԵՏԶ ԴԻՏԻ ԾՇԴՈՒԻ

Վարչապետարանին մօտիկ աղբիւր մը հաղորդեց, թէ կառավարութեան հերթական նիստը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Որբաթ օր: Այս առիթով, պետական նախարար ժան Օղասապեան մաղթեց, որ յառաջիկայ նիստին ընթացքին կառավարութիւնը վաւերացնէ պետական պիւնտէն ինչպէս նաեւ ամբողջացնէ վարչական նշանակումներու թղթածրարը: Հետաւեալիկ NBN կայանէն, սփռուած հարցազրոյցի մը ընթացքին, պետական նախարար ժան Օղասապեան յայտնեց, թէ քաղաքական իսկական հակամարտութիւնը Յունիս 7-ի ընտրութիւններէն ետք պիտի ստեղծուի, որովհետեւ, ընտրութիւններէն ետք պիտի որոշուի, թէ ինչպիսի վարչակարգով Լիբանան մը կը փափաքին լիբանանցիները: Ան մաղթեց, որ խորհրդարանական ընտրութիւններուն նախօրէին, ոմանք հրաժարէին ժողովուրդը յուզող հարցերը իրենց անձնական եւ ընտրական նպատակներուն համար շահագործելէ:

ՍԱՔՐ ՍԱՆՁՆԵՑ ԼՐՏԵՍԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ԹՂԹԱԾՐԱՐԸ

Հետաքննիչ ատեսնի դատախազ Սայիտ Միրզա, իր հարցաքննութիւնները՝ հանգըստեան կոչուած գնդապետ Էտիպ Ալ Ալամի, անոր կնոջ եւ եղբորը զաւակին հետ աւարտելէ ետք հարցաքննութեան թղթածրարը փոխանցեց զինուորական ատեսնին: Հետեւաբար, զինուորական ատեսնի մօտ կառավարու-

թեան բանազնաց, դատախազ՝ Սաքր Սաքր պիտի որոշէ Իսրայէլի հաշույն լրտեսութիւն կատարած ցանցին անդամներուն ճակատագիրը:

Միւս կողմէ, դատախազ Միրզա ստանձնեց ճիւղի քաղաքապետարանին մէջ կատարուած ապօրինութիւններու թղթածրար մը:

1915 - 2009 94 UNPUNISHED YEARS ARMENIAN GENOCIDE

ՀԱՅՈՑ ԶԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 94-ԱՄԵԱԿԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄ

Պատգամախօս՝ ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆ (Հայաստանի արտաքին գործոց նախկին նախարար)

ԳԵՂԱՐՈՒԵՏՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ՝ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԵԱՄԵ ԵՒ ԿԱՏԱՐՈՂՈՒԹԵԱՄԵ ԼԻԲԱՆԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

24 Ապրիլ 2009, Երեկոյեան ժամը 8:00-ին, «Էմիլ Լահուտ» հանդիսասրահին մէջ, Տրպայայէ:

ՀԱՅՈՑ ԶԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ